

ՄԱՍ 4.

ՀԱՅԱՍՏԱՆ.
ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ
ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 2018թ.-ին

Գլուխ 11. Աղքատության և կենսամակարդակի վերաբերյալ սուբյեկտիվ գնահատականները

Աղքատությունը բազմաբնույթ է և կարող է չափվել և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ մոտեցումներով: Հայաստանում 2018թ.-ին բարեկեցության մասին սուբյեկտիվ գնահատականները (իրենց բարեկեցության վերաբերյալ անհատների անձնական տեսակետները) 2.5 անգամ ցածր են օբյեկտիվ գնահատականներից (աղքատության մակարդակները գնահատվել են, համապատասխանաբար, 9.4% և 23.5%):

Իրենց ծայրահեղ աղքատ են համարել 0.9%-ը, ինչը մոտ է սպառման ցուցանիշով գնահատված ծայրահեղ աղքատության մակարդակին (1.0%):

Ըստ կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականի՝ 2018թ.-ին աղքատության մակարդակը 7.6 տոկոսային կետով ցածր է 2008 թ.-ի մակարդակից (17.0%):

11.1. Բնակչության կարծիքն իր կենսամակարդակի վերաբերյալ

2018թ.-ի հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է տնային տնտեսությունների 16 և բարձր տարիքի անդամների կարծիքը կենսամակարդակի առաջնային խնդիրների վերաբերյալ:

Աղյուսակ 11.1. Հայաստան. Տնային տնտեսությունների անդամների համար առավել առաջնային խնդիրները, 2018թ.

(տոկոսներով)

Առաջնային խնդիրները	2018թ.
Մննդի ապահովման խնդիր	9.1
Ոչ պարենային առաջնային կարիքներ	29.7
Բնակարանային հիմնահարց	27.6
Երեխաներին բավարար կրթությամբ ապահովելու խնդիր	2.9
Առողջության խնդիր	7.7
Այլ	23.0

Աղբյուրը. *SSYUՀ 2018թ.*

2018թ.-ին առավել առաջնային խնդիրներից նշվել են ոչ պարենային առաջնային կարիքները (29.7%) և բնակարանային հիմնահարցը (27.6%): 2018թ.-ին 2017թ.-ի նկատմամբ բնակարանային հիմնահարցը մեղմացել է 2%-ային կետով, իսկ ոչ պարենային առաջնային կարիքներն ավելացել են 3.6%-ային կետով: 2018թ.-ին սննդի ապահովման հարցը հիմնական խնդիր համարող տնային տնտեսությունների անդամների մասնաբաժինը 2017թ.-ի համեմատ 1.2%-ով նվազել է և կազմել՝ 9.1% (2017թ.-ին՝ 10.3%): Տնային տնտեսությունների 16 և բարձր տարիքի անդամների 29.7%-ի գնահատմամբ, ոչ պարենային առաջնային կարիքներից բավարարվածությունը համարվում է կարևոր հիմնախնդիր: Ինչպես նախորդ տարի, այնպես էլ 2018թ.-ին հարցվողների համար կարևոր հարցերից մեկը բնակարանային հիմնահարցն է (2017թ.-ին՝ 29.6%, 2018թ.-ին՝ 27.6%): 2018թ.-ին տնային տնտեսությունների 7.7% անդամների համար ամենաառաջնային խնդիրն առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունից զուրկ լինելն է: Հարցվողների 2.9%-ը որպես առաջնային խնդիր նշել է երեխաներին բավարար կրթությամբ ապահովելու անկարողությունը, իսկ 23.0%-ը նշել է այլ առաջնային խնդիրներ:

2008-2018թթ.-ին կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը փոփոխվել է հետևյալ կերպ.

Աղյուսակ 11.2 Հայաստան. Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը, 2008-2018թթ.

(տոկոսներով)

	Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը					
	ծայրահեղ աղքատ	աղքատ	միջինից ցածր	միջին	միջինից բարձր	հարուստ
2008թ.	2.3	14.7	35.6	43.0	4.2	0.2
2009թ.	2.9	15.0	37.3	41.3	3.4	0.1
2010թ.	2.2	12.4	38.8	42.2	4.0	0.4
2011թ.	2.1	13.3	38.2	43.2	3.1	0.1
2012թ.	3.1	14.5	38.2	39.9	4.2	0.1
2013թ.	3.3	14.7	40.7	36.6	4.6	0.1
2014թ.	2.4	14.6	42.3	36.5	4.1	0.1
2015թ.	1.9	13.7	45.1	36.1	3.2	0.0
2016թ.	1.4	15.2	45.8	34.3	3.2	0.1
2017թ.	1.1	12.0	41.8	41.8	3.2	0.1
2018թ.	0.9	8.5	45.9	40.6	4.0	0.1

Աղբյուրը. SSԿԱՀ2008-2018թթ.

Ըստ կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականի՝ 2018թ.-ին աղքատ (ներառյալ ծայրահեղ աղքատ) են իրենց համարել բնակչության 9.4 %-ը (2008թ.-ի 17.0%-ի համեմատ): Ըստ հարցվածների ինքնագնահատման՝ 2018թ.-ին.

- 45.9%-ի կարծիքով իրենց կենսամակարդակը միջինից ցածր է՝ 2008թ.-ի 35.6%-ի համեմատ,
- միջին կենսամակարդակ ունեցել են հարցվածների 40.6%-ը՝ 2008թ.-ի 43.0%-ի համեմատ,
- 4.0%-ը գտել է, որ ունի միջինից բարձր կենսամակարդակ՝ 2008թ.-ի 4.2%-ի համեմատ,
- իրենց հարուստ են համարել հարցվածների 0.1%-ը՝ 2008թ.-ի 0.2%-ի համեմատ:

Թե որքանով են համընկնում կենսամակարդակի սուբյեկտիվ և օբյեկտիվ գնահատականները, երևում է ստորև ներկայացված աղյուսակից, որտեղ տնային տնտեսությունների անդամները բաշխվել են ըստ սեփական կենսամակարդակին տրված իրենց իսկ գնահատականների և ըստ յուրաքանչյուր տնային տնտեսության անդամների համար հաշվարկված մեկ չափահասին համարժեք սպառման ազդեցատի, ինչին համապատասխան նրանք բաշխվել են՝ ըստ աղքատության մակարդակի:

Ինչպես երևում է Աղյուսակ 11.3-ից, ըստ օբյեկտիվ գնահատականի՝ առաջին (ամենաաղքատ) սպառման դեցիլային խմբի բնակչության 19.9%-ի կարծիքը համընկել է սեփական կենսամակարդակին (ծայրահեղ աղքատ և աղքատ) տրված իրենց իսկ գնահատականներին: Իսկ տասներորդ (ամենահարուստ) սպառման դեցիլային խմբի բնակչության միայն 8.5%-ի կարծիքն է համընկել սեփական (միջինից բարձր և հարուստ) գնահատականներին:

Աղյուսակ 11.3. Հայաստան. Կենսամակարդակի սուբյեկտիվ և օբյեկտիվ (ըստ սպառման ագրեգատի դեցիլային խմբերի) գնահատականները

(%-ով՝ յուրաքանչյուր դեցիլային խմբի մեջ), 2018թ.

(տոկոսներով)

Սպառման ագրեգատի դեցիլային խմբեր (օբյեկտիվ գնահատական)	Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը					
	ծայրահեղ աղքատ	աղքատ	միջինից ցածր	միջին	միջինից բարձր	հարուստ
Ընդամենը	0.9	8.5	45.9	40.6	4.0	0.1
այդ թվում՝						
Առաջին դեցիլ	3.4	16.5	54.5	22.9	2.7	
II	2.2	11.8	52.3	29.0	4.7	
III	0.9	8.8	52.4	35.2	2.7	
IV	1.2	8.9	53.4	34.8	1.7	
V	0.4	6.5	49.3	40.4	3.0	0.4
VI	0.2	7.8	41.3	47.7	3.0	
VII	0.6	6.9	45.6	44.1	2.8	0.0
VIII	0.5	9.9	43.4	42.2	4.0	
IX	0.2	5.8	37.8	50.2	6.0	
Տասներորդ դեցիլ	0.4	4.1	32.5	54.5	8.3	0.2

Աղբյուրը. *SSYULZ 2018թ.*

Նշում. *Սպառումը հաշվարկվել է ըստ մեկ չափահասի սպառմանը համարժեք:*


Չնայած արդյունքները հիմնականում համընկնում են, սակայն ընդհանուր աղքատության սուբյեկտիվ գնահատականն ավելի ցածր է, քան օբյեկտիվը: Իրեն աղքատ է համարել (չհաշված ծայրահեղ աղքատներին) բնակչության 8.5%-ը, մինչդեռ մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա աղքատ է գնահատվել նույն մոտեցումով բնակչության 22.5-ը: Միննույն ժամանակ բնակչության 0.9%-ն է իրեն գնահատել ծայրահեղ աղքատ, ինչը մոտ է մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա ծայրահեղ աղքատ գնահատված բնակչության ցուցանիշին՝ 1.0%: Հետաքրքիրն այն է, որ իրենց կենսամակարդակը միջինից բարձր գնահատած բնակչության տեսակարար կշիռը կազմել է 4.0%, և բնակչության միայն 0.1%-ն է իրեն հարուստ համարել:

Գծապատկեր 11.1-ում հետազոտված տնային տնտեսությունները բաշխվել են ըստ իրենց կենսամակարդակին տրված գնահատականների և ըստ մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա գնահատված աղքատության մակարդակի: Մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա ոչ աղքատ գնահատված տնային տնտեսությունների անդամների 0.5%-ն իրեն գնահատել է որպես ծայրահեղ աղքատ, սպառման ագրեգատի հիման վրա աղքատ գնահատված տնային տնտեսությունների անդամների 2.3%-ը կարծում է, որ իրենք ծայրահեղ աղքատ են:

Սպառման ագրեգատով ծայրահեղ աղքատները հետևյալ գնահատականներն են տվել իրենց սոցիալ-տնտեսական վիճակին՝ 6.1%-ն իրեն համարել է ծայրահեղ աղքատ, 34.4%-ը՝ աղքատ, 43.4%-ը՝ միջինից ցածր, 13.2%-ը՝ միջին, 2.9%-ը՝ միջինից բարձր և ոչ մի ծայրահեղ աղքատ չի գնահատել իր կենսամակարդակը հարուստ:

Գծապատկեր 11.1. Հայաստան. Կենսամակարդակի սուբյեկտիվ և օբյեկտիվ գնահատականները, 2018թ.

(տոկոսներով)



Աղբյուրը. SSԿԱՀ 2018թ.

Հարցման մասնակիցների պատասխաններն այն հարցին, թե ամսական մեկ շնչի հաշվով որքան գումար է անհրաժեշտ լավ և շատ լավ ապրելու կամ գոյատևելու համար, ըստ 2018թ. հետազոտությունների արդյունքների, բերվում են ստորև.

Աղյուսակ 11.4. Հայաստան. Տնային տնտեսությունների տեսակետը՝ շատ լավ, լավ ապրելու համար և ծայրը ծայրին հասցնելու անհրաժեշտ անվանական ամսական գումարի չափը (մեկ շնչի հաշվով), 2018թ.

	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով
Շատ լավ ապրելու համար	588 965	1 220
Լավ ապրելու համար	245 515	509
Գոյատևելու համար	99 039	205

Աղբյուրը. SSԿԱՀ 2018թ.

2018թ. հետազոտության ընթացքում կենսամակարդակը բարձրացնելու ուղղությամբ իրենց ակնկալիքների վերաբերյալ տնային տնտեսության 16 և բարձր տարիքի անդամներից նշել են հետևյալը՝ ինձնից ոչինչ կախված չէ, կառավարությունը պետք է ապահովի աշխատանքով և լավ պայմաններով (36.2%), պլաններ չունեն (21.7%), փնտրում է եկամտաբեր աշխատանք Հայաստանում (15.1%), իմ կենսամակարդակն ինձ համար ընդունելի է (9.7%), չգիտեմ ինչպես դուրս գալ այս իրավիճակից (8.8%), փնտրում եմ եկամտաբեր աշխատանք Հայաստանից դուրս (3.0%), սպասումներ չունեմ ընդհանրապես, ստիպված եմ հեռանալ Հայաստանից (2.8%): Հարցվածների 2.2%-ը նշել է ,որ ցանկանում է սկսել սեփական գործ Հայաստանում, իսկ Հայաստանից դուրս սեփական գործ ուզում է սկսել միայն 0.5%-ը:

Հարցվածների 55.6%-ի կարծիքով նոր սերունդն ավելի լավ կապրի(2017թ.-ի 31.9%-ի համեմատ), 11.6%-ի կարծիքով նոր սերունդն ավելի վատ կապրի(2017թ.-ի 27.2%-ի համեմատ), 10.3%-ի կարծիքով՝ նրանք կապրեն նույն ձևով, իսկ հարցվածների 22.5 %-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին:

11.2. Բավարարվածությունը մատուցվող վճարովի ծառայությունների որակից

Հետազոտության ընթացքում պարզվել է հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների տեսակետը՝ տարբեր հաստատությունների կողմից մատուցվող վճարովի ծառայությունների վիճակի վերաբերյալ: Աղյուսակ 11.5-ում ներկայացված է հարցման մասնակիցների բավարարվածությունը մատուցվող վճարովի ծառայություններից: Աղյուսակից երևում է, որ 2018թ.-ին տնային տնտեսությունները հիմնականում բավարարված են էլեկտրաէներգիայի մատակարարումից (98.9%-ը վկայել է այդ մասին): Բավարարվածության աստիճանը բարձր է նաև ջրամատակարարման ծառայությունից՝ 87.3%, աղբի հավաքումից՝ 78.7%, ջրահեռացման ծառայությունից՝ 76.5%, բանկերի աշխատանքից՝ 73.7%, փոստի ծառայություններից 73.5% և հասարակական տրանսպորտի աշխատանքից՝ 72.1%: Մինևույն ժամանակ տնային տնտեսությունների մի մասն անբավարարվածություն է հայտնել առողջապահության (21.4%), աղբի հավաքման (19.6%), հասարակական տրանսպորտի (19.5%), ոռոգման (13.6%) և ջրամատակարարման ծառայություններից (12.3%): 2008թ.-ի համեմատ՝ 2018թ.-ին տնային տնտեսությունների բավարարվածությունը մատուցվող վճարովի ծառայություններից աճել է, բացի ստացիոնար հեռախոսակապի, կրթության, հասարակական տրանսպորտի: Փոստի ծառայություններից բավարարվածությունը մնացել է նույն մակարդակին:

Աղյուսակ 11.5. Հայաստան. Բավարարվածությունը մատուցվող վճարովի ծառայություններից, 2008 և 2018թթ.

(տոկոսներով)

Վճարովի ծառայությունների անվանումը	Բավարարված են		Բավարարված չեն		Դժվարացել են պատասխանել	
	2008թ.	2018թ.	2008թ.	2018թ.	2008թ.	2018թ.
Ջրամատակարարում	57.1	87.3	42.5	12.3	0.4	0.4
Ջրահեռացում	65.0	76.5	23.1	11.7	11.9	11.8
Աղբի հավաքում	54.1	78.7	42.4	19.6	3.5	1.7
Հեռախոս ստացիոնար	74.2	49.2	13.5	4.9	12.3	45.9
Էլեկտրաէներգիայի մատակարարում	97.4	98.9	2.4	0.9	0.2	0.2
Փոստ	73.7	73.5	2.6	2.5	23.7	24.0
Բանկերի աշխատանք	61.4	73.7	2.4	6.6	36.2	19.7
Ոռոգում	18.2	21.5	20.9	13.6	60.9	64.9
Առողջապահություն	56.1	62.3	29.0	21.4	14.9	16.3
Կրթություն	62.2	54.9	15.5	11.1	22.3	34.0
Հասարակական տրանսպորտ	80.2	72.1	15.6	19.5	4.2	8.4


Աղբյուրը. 2008 և 2018թթ. SSYU2

Այն հարցին, թե վերջին 12 ամիսների ընթացքում ինչպիսի փոփոխություններ են եղել վերը նշված ծառայությունների մատուցման մեջ, հարցվողների մի մասը դրական տեղաշարժ է նկատել, այսպես, 3.9%-ից՝ (ոռոգում) որպես նվազագույն դրական տեղաշարժ, մինչև 17.5 0%՝ (բանկերի աշխատանք) որպես առավելագույն դրական տեղաշարժ:

Գծապատկերներ 11.2-ում և 11.3-ում ներկայացված են 2018թ.-ին ծառայությունների մատուցման մեջ կատարված դրական և բացասական փոփոխություններն առավել մանրամասն:

Գծապատկեր 11.2. Հայաստան. Ծառայությունների մատուցման մեջ հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների կողմից արձանագրված դրական փոփոխությունները, 2018թ

(տոկոսներով)




Աղբյուրը. *SSYԱՀ 2018թ.*

2018թ.-ին ծառայությունների մատուցման մեջ արձանագրված ամենադրական տեղաշարժերը կատարվել են բանկերի, ջրամատակարարման, ադրահանության, փոստի աշխատանքներում, էլեկտրաէներգիայի մատակարարման մեջ և հասարակական տրանսպորտի աշխատանքում :

Գծապատկեր 11.3. Հայաստան. Ծառայությունների մատուցման մեջ հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների կողմից արձանագրված բացասական փոփոխությունները, 2018թ.

(տոկոսներով)



Աղբյուրը. *SSYԱՀ 2018թ.*

Համաձայն 2018թ. ՏՏԿԱՀ արդյունքների, ծառայությունների մատուցման գործում արձանագրված ամենաբացասական տեղաշարժերը գրանցվել են առողջապահության (5.3%), աղբահանության(4.2%), կրթության (3.5%) և հասարակական տրանսպորտի (3.1%) ոլորտներում (Գծապատկեր 11.3):

Ծառայությունների որակի վատացման դեպքում, հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների փոքր մասն է դիմել համապատասխան ծառայությունների ղեկավարությանը: Աղյուսակ 11.6-ում ներկայացված են ծառայությունների որակի վատացում արձանագրած բնակչության ձեռնարկած քայլերը և ստացված արդյունքները: Ինչպես երևում է աղյուսակից, բնակչությունը բավական հազվադեպ է դիմում մատուցվող ծառայությունների որակի բարելավման հայցով:

Բացի քանակական տվյալներից, շատ կարևոր են որակական տվյալները: Այսպես օրինակ, ղեկավարության կողմից ընթացք է տրվել առողջապահության ծառայությունների մատուցման հետ կապված վատ աշխատանքի վերաբերյալ դիմումների 31.7%-ին, ռոռգման ծառայությունների մատուցման դեպքում՝ 27.7%-ին, խմելու ջրի մատակարարման դեպքում՝ 22.0%-ին, բանկային ծառայությունների մատուցման դեպքում՝ 13.8%-ին, աղբի հավաքման բողոքների՝ 9.1%-ին, հասարակական տրանսպորտի՝ 5.9%-ին:

Աղյուսակ 11.6. Հայաստան. Ծառայությունների որակի վատացման դեպքում դիմելը համապատասխան ծառայությունների ղեկավարությանը, 2008 և 2018թթ.

(տոկոսներով)

Վճարովի ծառայությունների անվանումը	Գրանցվել է մատուցվող ծառայության որակի վատացում		Չեն դիմել ղեկավարությանը ծառայության որակի վատացման դեպքում		Դիմելու դեպքում ղեկավարությունը ձեռնարկել է որոշակի քայլեր իրավիճակը բարելավելու համար	
	2008 թ.	2018թ.	2008 թ.	2018 թ.	2008 թ.	2018 թ.
Ջրամատակարարում	10.9	1.9	93.7	97.0	19.6	22.0
Ջրահեռացում	3.6	1.0	97.2	98.9	52.8	64.7
Աղբի հավաքում	8.6	4.2	96.6	97.3	30.8	9.1
Հեռախոս ստացիոնար	4.1	0.2	93.3	99.4	75.8	97.3
Էլեկտրաէներգիայի մատակարարում	0.8	0.5	94.8	97.3	91.1	94.6
Փոստ	0.6	0.2	99.5	99.5	84.7	97.2
Բանկերի աշխատանք	0.9	0.6	99.3	99.8	84.6	13.8
Ոռոգում	2.2	1.5	97.2	98.4	30.2	27.7
Առողջապահություն	7.7	5.3	98.3	99.7	30.3	31.7
Կրթություն	6.3	3.5	99.3	99.9	34.2	73.7
Հասարակական տրանսպորտ	4.5	3.1	99.2	98.6	51.9	5.9

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2008 և 2018թթ